



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇԽԱՆՔՎԱՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

24 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի  
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի  
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Արփավազդ Պետրոսյանի անհարական դիմումով գործը  
քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐՁԵՅ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կեփի՝ քաղաքացի Արփավազդ Պետրոսյանը 2011թ. հոկտեմբերի 5-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ աշխարհական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կեփի եւ 114-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 14.1.-րդ հոդվածի, 32-րդ հոդվածի 1-ին մասի, 42-րդ հոդվածի 1-ին մասի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 47-րդ հոդվածի 1-ին մասի եւ 48-րդ հոդվածի 2-րդ ենթակեփի պահանջներին:

Դիմողը գիտում է, որ աշխարհական իրավունքի նորմեր պարունակող համապատասխան ՀՀ օրենքներով քաղաքացիական, դատական եւ այլ ծառայողների համար սահմանված է աշխարհական քանակի եւ հասքիքների կրծագրման դեպքում աշխարհական գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը, մինչդեռ ՀՀ աշխարհական օրենսգրքում քաղաքացիական, դատական եւ այլ ծառայողներ չհանդիսացող աշխարհական իրավունքի համար նմանօրինակ իրավունք նախարեսաված չէ, ինչը, դիմողի

կարծիքով, հանդիսանում է ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենսդրական բաց եւ խախուսում է այդպիսի աշխափողների հավասարության իրավունքը եւ ակնհայր խորականության դրսեւորում է:

Տվյալ անհափական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ դրա քննությունը ենթակա է մերժման օրենքով սահմանված հետեւյալ հիմքերի առկայության պայմաններում:

1. Ուշադրության արժանի է այն կարեւոր հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դափարանը դեռևս իր՝ 2009թ. փեքրվարի 24-ի ՍԴՈ-792 /կետ 7/, 2010թ. հունիսի 1-ի ՍԴՈ-891 եւ 2010թ. հուլիսի 7-ի ՍԴՈ-902 /կետ 5/ որոշումներով անդրադել եւ իրավական դիրքորոշումներ է արդահայտել ՀՀ աշխափանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանադրականության վերաբերյալ եւ այն ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող /ՍԴՈ-891 որոշման եզրափակիչ մաս/: Անհրաժեշտ է մարդանշել նաև, որ ՀՀ աշխափանքային օրենսգրքի հիշափակված հոդվածի 3-րդ կետը՝ առանց էական փոփոխությունների, 24.06.2010թ. ՏՕ-117-Ն օրենքով վերաշարադրվել է իրեւ 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Մասնավորապես, ՍԴՈ-902 որոշմամբ սահմանադրական դափարանն արձանագրել է, որ պնդեսական, փեխնողգիական եւ կազմակերպչական պարճառներով աշխափանքում վերականգնելու անհնարինության դեպքերում աշխափողին աշխափանքում չվերականգնելու ինսպիրուտիվ ինքնին իրավաչափ է:

2. Գործում առկա դափական ակդերի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ աշխափանքային օրենսգրքի 114-րդ հոդվածը դիմողի նկազմամբ կիրառված չէ ընդհանրապես, մինչեւ անհափական դիմումին ներկայացվող պահանջներից մեկն է դիմողի նկազմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիրացված դափարանի կողմից վիճարկվող իրավանորմի կիրառումն է: Բացի դրանից, «Սահմանադրական դափարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասից բխում է, որ վիճարկվող իրավադրույթների հետ նորմափիվ համապատասխան ակդի այլ դրույթների համակարգային առումով փոխկապակցված լինելու հանգամանքը որոշում է սահմանադրական դափարանը եւ ոչ թե դիմողը:

3. Խնդրու առարկա անհափական դիմումն ակնհայր անհիմն է, քանի որ դիմողը վիճարկվող նորմերի ՀՀ Սահմանադրությանը հակասելու պարագան փորձել է հիմնավորել ենթադրյալ օրենսդրական բացով:

ՀՀ սահմանադրական դափարանն իր՝ 2010թ. փեքրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշմամբ /կետ 6/ ամրագրել է, որ բոլոր դեպքերում, եթք իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորքում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմա-

**Կիվ պարզիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: **ՀՀ սահմանադրական դատարանը նույնախիսի իրավական դիրքորոշում արգահայփել է նաև 2010 թ. սեպտեմբերի 14-ի UԴՈ-914 որոշմամբ /կետ 7/:**

Ասվածից հետեւում է, որ եթե նույնախիս առկա է օրենսդրական բաց, ապա այն լրացնելու իրավասությունը պարկանում է օրենսդիր մարմնին:

4. Անհապական դիմումի վերլուծությունից բխում է նաև, որ դպյալ դեպքում դիմողի կողմից իրապես վիճարկվում է խնդրո առարկա իրավանորմերի կիրառման իրավաչափությունը: **ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի UԴՈ-21 աշխադրակարգային որոշմամբ առանձնակի ընդգծվել է, որ, եթք դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ եռթյան, բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպարակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով /կետ 8/:**

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, **ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դադարկան կազմը**

## **ՈՐՈՇԵՑ.**

Քաղաքացի Արդարական Պետրոսյանի անհարական դիմումով գործի քննությունը մերժել:

**Նախագահող՝**

**Վնդամեր՝**



24 հոկտեմբերի 2011 թվականի  
ՍԴԴԿՈ/2-14